ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ---------- - ի 2010 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 138-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետի վերջին կիրակի օրը նշանակել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ընտրատարածքում անցկացնել գյուղական համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություն։

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2010 թվականի առաջին եռամսյակում՝

1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին հատկացնել 507031 դրամ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը հատկացնել 110246 դրամ։

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների ֆինանսավորումը կատարել նախահաշիվներին համապատասխան՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների։

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ ընտրողների ցուցակների կազմման, վարման և ընտրողների ծանուցագրերի տպագրման, առաքման ֆինանսավորումը կատարել նախահաշվին համապատասխան՝ համաձայն N 3 հավելվածի։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Զեկուցող ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ

Վաչե Տերտերյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համաձայն թիվ 29 ընտրատարածքային հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 179-Ա որոշման՝ ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու օրենքով սահմանված յոթ անդամներից փաստացի ընտրվել են յոթը։

Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 22.05.2009թ. թիվ 3 արձանագրության համաձայն, ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու հիմքով՝ վաղաժամկետ դադարեցվել են համայնքի ավագանու անդամ Գարիկ Գրիգորյանի լիազորությունները։

Համայնքի ավագանու 19.10.2009թ. թիվ 7 արձանագրության համաձայն՝ վաղաժամկետ դադարեցվել են համայնքի ավագանու անդամ Նորայր Մալխասյանի լիազորությունները, վերջինիս հրաժարական տալու հիմնավորմամբ։

Համայնքի ավագանու 18.01.2010թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ վաղաժամկետ դադարեցվել են համայնքի ավագանու անդամներ Մայիս Դավթյանի և Բագրատ Վարդանյանի լիազորությունները, համապատասխանաբար՝ հրաժարական տալու և մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի ավելի քան կեսից անհարգելի պատճառով բացակայելու հիմնավորումներով։

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ անհնարին է դարձել համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը։ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան՝ 2010 թվականի հունվարի 18-ին կազմվել է ավագանու լիազորությունների դադարեցման վերաբերյալ արձանագրություն, որը ՀՀ Արմավիրի մարզպետը ներկայացրել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն։

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություն նշանակելու, անցկացնելու և ընտրության նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է համայնքի ավագանու լիազորությունների դադարեցման հանգամանքով։